

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
, ԶԻ ԹԻ ԷՍ ՍԹՈՈՒՆԷ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԲԱԶԱԼՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ <<ԶԻ ԹԻ ԷՍ
ՍԹՈՈՒՆԷ>> ԵՐԵՎԱԿՈՒՄՈՒՄ **203205**ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

, ԶԻ ԹԻ ԷՍ ՍԹՈՈՒՆԷ
տնօրեն՝

Արամայիս Մուքայելյան

Երևան **2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1 Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը և բնութագիրը	4
1.2 Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	5
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	8
2.1 Գտնվելու վայրը	8
2.2 Երկրաբանական կառուցվածքը ֆ	14
2.3 Ռելիեֆ, երկրաձևաբանություն	16
2.4 Երևակման տարածաշրջանի կլիման	24
2.5 Մթնոլորտային օդ	27
2.6 Ջրային ռեսուրսներ	27
2.7 Հողեր	36
2.8 Բուսական և կենդանական աշխարհ	38
2.9 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	42
3 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	44
3.1 Ենթակառուցվածքներ	44
3.2 Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	52
3.3 Պատմության, մշակութային հուշարձաններ	52
4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	55
5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ Օգտագործված գրականություն	55 64

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամաս՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում հաշվառված հանքավայրի տարանջատ տեղամաս, որը հաշվառված է առանձին անվանմամբ և սահմանանիշերով

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Երկրաբանական ուսումնասիրության ծրագիր՝ լիազոր մարմնի հետ համաձայնեցված փաստաթուղթ՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման վերաբերյալ.

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված՝ հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներին համապատասխան

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկում՝ ժամանակի և տարածության մեջ պարբերաբար ուսումնասիրությունների միջոցով շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների վիճակի և դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնների դիտարկման, վիճակի գնահատման ու կանխատեսման գործընթաց

Ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ ընդերքօգտագործման թափոնների հավաքման, փոխադրման, վնասազերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման, մշակման, օգտահանման գործողություններ, որոնք ուղղված են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների կառավարման միջոցով շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների բացասական ազդեցության հնարավորության դեպքում կանխմանը կամ հնարավորինս նվազեցմանը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը և բնութագիրը

ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկի բազալտների Ջի Թի Էս Սթոուն երևակումում 2023-2025թթ նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն: Աշխատանքների իրականացման նպատակային առաջադրանքներն են է.

- Կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ Սասունիկ գյուղից 1,5 կմ արևելք գտնվող բազալտների երևակման տարածքում, որի արդյունքում պարզել օգտակար հանածոյի քանակական և որակական հատկությունները և պարզաբանելու դրանց պիտանելիությունը երեսպատման և շինարարական քար, որը կհամապատասխանի “Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий” 9479-2011 ГОСТ-ի և «Ավագ շինարարական աշխատանքների համարե ГОСТ 8635 -2034 տեխնիկական պահանջներին համապատասխանող վերջնարտադրանքների ստացումը:

2. Երկրաբանական խնդիրները, դրանց կատարման մեթոդներն ու հաջորդականությունը

-- Տեղամասում 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիկակա և երկրաբանական հանույթ,

- տեղամասի հետախուզում հորատանցքերի հորատմամբ ու համապատասխան նմուշարկմամբ,

- Օգտակար հանածոյի քիմիական, պետրոգրաֆիական, ճառագայթահիգենիկ հատկությունների ուսումնասիրություն

-տեղամասի հիդրոերկրաբանական լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանների ինչպես նաև շրջական միջավայրի պահպանության հարցերի ուսումնասիրություն

-բազալտների պաշարների աշվարկ

-տեղամասի երկրաբանատնտեսականգիտական գնահատում:

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հենքը

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280.28.11.2011) որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001) որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2001), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման,

ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-~~21124.10.2005~~^{21124.10.2006})-ը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- , Բուսական աշխարհի մասին՝ ՀՀ օրենք (ՀՕ-~~22.23.11.1999~~^{22.23.11.2000})-ը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- , Կենդանական աշխարհի մասին՝ ՀՀ օրենք (ՀՕ-~~52.03.04.2000~~^{52.03.04.2001})-ը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- , Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին՝ ՀՀ օրենք (ՀՕ-~~211.27.11.2006~~^{211.27.11.2007})-ը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- , Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին՝ ՀՀ օրենք (ՀՕ-~~11021.06.2014~~^{11021.06.2015})-ը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ բնապահպանության նախարարի ~~24.1.2013~~^{24.1.2014} թվականին հրամանը ուժը կորցրած է ճանաչվել ~~07.01.2012~~^{07.01.2013} թվականով,
- Կառավարության ~~2308,2011~~^{2308,2012} թվականի որոշումն ուժը կորցրած է ճանաչվել ~~21.10.2021~~^{21.10.2022} թվականով,
- ՀՀ կառավարության ~~10.01.2013~~^{10.01.2014} թիվ ~~22~~²³ թիվ որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության ~~14.12.2017~~^{14.12.2018} թիվ ~~163~~¹⁶⁴ թիվ որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի

նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության ~~14.08.2014~~**14.08.2014** N78-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության ~~22.02.2014~~**22.02.2014** N19-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության ~~02.11.2014~~**02.11.2014** N140-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության ~~29.01.2010~~**29.01.2010** N74-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության ~~29.01.2010~~**29.01.2010** N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության ~~14.08.2008~~**14.08.2008** թիվ 96-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը,
- ՀՀ առողջապահության նախարարի ~~06.03.2008~~**06.03.2008**-ի N 138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը,
- ՀՀ առողջապահության նախարարի ~~17.05.2006~~**17.05.2006** N 533 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ կառավարության ~~15.06.2016~~**15.06.2016**,
- ՀՀ կառավարության ~~08.09.2011~~**08.09.2011** N1396 որոշումը,
- ՀՀ կառավարության ~~18.08.2012~~**18.08.2012** N1352 որոշումը,
- ՀՀ կառավարության ~~21.10.2021~~**21.10.2021** N1733 որոշումը,
- <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Օրենքը /1994թ հոկտեմբերի 11, ՀՕ-121/,
- Թափոնների մասին ՀՀ Օրենքը /24.11.2004թ./,
- -ՀՀ կառավարության 15.06.2017թ 675-Ն որոշում:
- - ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N848-Ն որոշում:
- - ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 24.10.2022թ 369-Ն հրաման:
- ՀՀ կառավարության 2014թ սեպտեմբերի 25 ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում ետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին 1059-Ա որոշումը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Գտնվելու վայրը

ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկի բազալտների «Ջի Թի Էս Սթոուն» երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման սույն ծրագիրը կազմվել է «Ջի Թի Էս Սթոուն» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և նախատեսվում է աշխատանքները կատարել ինչպես սեփական ուժերով, այնպես էլ պայմանագրային հիմունքներով սեփական միջոցների հաշվին:

Սույն ծրագրի կազմման նպատակն է «Ջի Թի Էս Սթոուն» հանքերևակումում 5.13 հա տարածքի վրա կատարել համալիր երկրաբանահետախուզական աշխատանքներ ուղեկցելով դրանք հորատանցքերի հորատմամբ մինչև 15մ խորությամբ (նկ. 1 և 2):

Վերոհիշյալ աշխատանքների դրական արդյունքների դեպքում կառանձնացվեն հեռանկարային տեղամասեր, որոնցում իրականացված հորատանցքերից ստացված տվյալների հիման վրա կկատարվի B և C1 կարգով պաշարների հաշվարկ:

Աշխատանքների ավարտին կկազմվի հաշվետվություն պաշարների հաշվարկված տվյալներով:

Սասունիկի բազալտների «Ջի Թի Էս Սթոուն» երևակումը գտնվում է Սասունիկ գյուղից մոտ 1.5կմ դեպի արևելք, Աշտարակ քաղաքից շուրջ 4,0կմ հարավ, Պոռշյանից մոտ 4կմ և զբաղեցնում է 5.13հա տարածք 1090-ից 1100 մ բացարձակ բարձրությունների վրա:

Երևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

400 14' 52" հյուսիսային լայնության,

440 21' 55" արևելյան երկայնության:

Տեղամասը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Դրանից շուրջ 5կմ հյուսիս անցնում է Երևան-Գյումրի ավտոմայրուղին: Շրջակա բնակավայրերի հետ երևակումը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Օրոգրաֆիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արագածի հրաբխային զանգվածի նախալեռնային գոտում, որը ներկայացնում է անտառազուրկ նախալեռնային շրջան՝ սակավ խոտաբուսական ծածկով: Ռելիեֆի բարձրադիր մասերը ներկայացված են հրաբխային տուֆերով, բազալտներով, անդեզիտաբազալտներով և տարակազմ լավաներով, հաճախ հանդիպում են նաև հրաբխային խարամային կոներ: Շրջանում տիրապետող բարձրությունը Արայի լեռն է (2575.9 մ):

Շրջանի հիմնական ջրային զարկերակը Քասախ գետն է, իր վտակներով, որոնք բնութագրվում են խիստ արտահայտված սեզոնային անհավասարաչափ ռեժիմով: Դրանց դեբիտն ամռանը խիստ ընկնում է: Շրջանի ջրային ավազանում մեծ դեր ունեն բազմաթիվ աղբյուրները, որոնք Քասախ գետի կիրճում դուրս են գալիս լավային հոսքերի տակից: Ռոտման նպատակով կառուցվել է Շամիրամի ջրանցքը:

Տնտեսական առումով շրջանն առավելապես գյուղատնտեսական է, որի հիմնական ուղղություններն են այգեգործությունը, անասնապահությունը և հացահատիկային կուլտուրաների մշակումը: Բնակչության մի մասը զբաղված է շինանյութերի

արդյունահանմամբ և մշակմամբ ու ապահովված է քարագործ բանվորական և ինժեներատեխնիկական կադրերով: Գործում են այդ ոլորտի մի շարք ձեռնարկություններ, պահածոների և զինու գործարաններ:

Շրջանը էլեկտրաէներգիայով մատակարարվում է հանրապետական միացյալ էներգահամակարգից:


Շրջանի կլիման չոր մայրցամաքային է, ձյունառատ, բայց կարճատև ձմեռով և շոգ ամառով: Ձմռանը օդի ջերմաստիճանը իջնում է մինչև -25°C հունվար, իսկ ամռանը հասնում է մինչև $+35^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 450 մմ է:

Շրջանում հայտնի են տուֆերի, բազալտների, հրաբխային խարամների խոշոր պաշարներով շահագործվող մի շարք հանքավայրեր, որոնց հենքի վրա զարգացել է շինանյութերի տարածաշրջանային տնտեսական նշանակություն ունեցող արդյունաբերություն: <<Զի Թի Էս Սթոուն>> երևակման ծայրակետերի կոորդինատները՝ ARM WGS-84 կոորդինատային համակարգով:

1	X=4457570.0353	Y=8446089.7327
2	X=4457589.7406	Y=8446072.4144
3	X=4457597.4304	Y=8446053.6528
4	X=4457599.8335	Y=8446032.9671
5	X=4457600.3141	Y=8446007.4706
6	X=4457595.9885	Y=8445994.0008
7	X=4457576.2833	Y=8445981.0121
8	X=4457497.4621	Y=8445982.4553
9	X=4457442.6718	Y=8445990.6334
10	X=4457440.7635	Y=8445988.8747
11	X=4457428.8574	Y=8445974.0723
12	X=4457427.8418	Y=8445904.1393
13	X=4457277.9539	Y=8445885.9392
14	X=4457281.2762	Y=8445937.7602
15	X=4457313.1555	Y=8445963.2244
16	X=4457344.1436	Y=8446020.3623
17	X=4457373.4710	Y=8446014.6099
18	X=4457393.0955	Y=8446013.9907

19	X=4457395.6146	Y=8446026.0043
20	X=4457410.3345	Y=8446096.2027
21	X=4457395.2184	Y=8446101.2090
22	X=4457401.1836	Y=8446115.8898
23	X=4457392.8816	Y=8446131.0367
24	X=4457394.0018	Y=8446139.0046
25	X=4457364.0993	Y=8446189.6026
26	X=4457361.9240	Y=8446194.6998
28	X=4457472.2718	Y=8446236.3413
27	X=4457338.8805	Y=8446239.5235
29	X=4457469.5601	Y=8446221.5885
30	X=4457469.9705	Y=8446198.7883
31	X=4457474.1523	Y=8446195.3880
32	X=4457491.4589	Y=8446189.8380
33	X=4457496.1964	Y=8446147.4535
34	X=4457500.9339	Y=8446105.0691
35	X=4457496.9816	Y=8446095.0244

Նկար 1. Մարզի ակնարկային քարտեզ





Նկար 2. Հանքերնակման իրավիճակային քարտեզ՝

Մոտակա ջրային ռեսուրսը դա քասախ գետն է, որը հոսում է հայցվող տարացքից մոտ 2,1կմ հյուսիս-արևմուտք հեռավորության վրա: Աշտարակ-Եղվարդի ճանապարհը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1,7կմ հյուսիս-արևմուտք:

Մասշտաբ 1 : 25 000

— Հայցվող տարածքի եզրագիծը

2.2. Երկրաբանական կառուցվածքը

ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկի բազալտների հանքավայրի «Զի Թի Էս Սթոուն» երևակումը գտնվում է Արագած լեռան նախալեռնային գոտում, ուստի դրա երկրաբանական կառուցվածքը պայմանավորված է Արագածի հրաբխային զանգվածի կառուցվածքով: Արագած լեռան կենտրոնական և երկրորդական օջախների հետ կապված հրաբխային տուֆերի, բազալտների, անդեզիտա-բազալտների, հրաբխային խարամների ու լավային ապարների հետ, որոնց ուսումնասիրությամբ տարբեր ժամանակներում զբաղվել են մի շարք ուսումնասիրողներ, որոնցից են Կ.Պաֆֆենհոլցը, Ա.Զավարիցկին, Ա.Ասլանյանը, Վ.Ամարյանը և ուրիշներ: Հաշվի առնելով Վ.Ամարյանի աշխատանքներում տրված շրջանի հիշյալ հրաբխային ապարների տարածման և առաջացման ամփոփ պարզաբանումները, նրա կազմած 1:50000 մասշտաբի քարտեզում արտահայտված շրջանի երկրաբանական կառուցվածքի ներկայիս պատկերացումները՝ սույն հաշվետվությունում համառոտ տրվում է հետախուզված հանքավայրի հարակից տարածքի երկրաբանական կառուցվածքն ըստ Վ.Ամարյանի:

Հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքում հիմնականում մասնակցում են նեոգենի և չորրորդական ժամանակաշրջանների ապարներ, ինչպես նաև առաջացումներ: Այդ ապարների ստրատիգրաֆիական կտրվածքը ներքևից վերև ներկայացված է հետևյալ կերպ:

Ստորին-միջին միոցեն: Այս հասակի ապարները ներկայացված քարտեզի սահմաններում չեն մերկանում, դիտվում են կտրվածքում և ներկայացված են 3 հաստաշերտերով.

- խայտաբղետ (ավազային գլաքարերի, կոնգլոմերատների և կարմրագույն ավազաքարերի հերթափոխություն) հաստաշերտ, որի հզորությունը հասնում է 100-500 մ;
- խայտաբղետ (քարաղի, աղատար կավերի և անհիդրիտի շերտերի հերթափոխություն) հաստաշերտ՝ 100-700 մ հզորությամբ;
- գիպսատար (գիպսատար կավերի ու գիպսի շերտերի հերթափոխություն) հաստաշերտ՝ 50-200 մ հզորությամբ:

Վերին միոցեն (Սարմատ) – Նույնպես շրջանում չի մերկանում, ներկայացված է 50-300մ հզորության ավազակավային հաստաշերտով:

Ստորին պլիոցեն-Ավազակոպճագլաքարային և կավային նստվածքներ 20-200մ հզորության (միայն կտրվածքում):

Վերին պլիոցեն: – Ներկայացված է ակչագիլ և ապշերոն հարկերով:

Ակչագիլ - Ներկայացված է.

- փոքր հզորության՝ մինչև 60 մ, թթու պեմզային մոխրով;
- դոլերիտային անդեզիտաբազալտներով, որոնք մերկանում են Քասախ գետի կիրճի հունահիմքային մասի կտրվածքում և ծածկվում են Արագածի 2-րդ ցիկլի հզոր

ժայթքման անդեզիտաբազալտներով: Դրանք Արագածի հրաբխային ցիկլի հիմքի լավաներն են, որոնց հզորությունը հասնում է 150-200 մետրի:

Այս հաստվածքին հաջորդում են ակչագիլին վերագրվող 5-30 մ հզորության հասնող անդեզիտները:

Ապշերոն – Հրաբխային առաջացումների այս 2-րդ համալիրը կազմում է Արագած լեռան գլխավոր զանգվածը և տեղադրված է բոլոր վերը նկարագրված լավաների լվացված մակերեսների վրա: Այս համալիրի կտրվածքում առանձնանում են.

- տուֆալավաներ, տուֆեր, պեմզային գլաքարեր: Լրիվ կտրվածքը դիտվում է Քասախ գետի աջ ափին, հզորությունը հասնում է 25 մետրի;

- բազալտներ, անդեզիտաբազալտներ և այլն, ժայթքած Արագած լեռան ինչպես գլխավոր օջախից, այնպես էլ շրջանի տարբեր մասերում ցրված հրաբխային կոներից, հզորությունը 10-40 մ;

Այս հաստվածքին է վերագրվում հետախուզված Սասունիկի հանքավայրի «Ջի Թի Էս Սթոուն» տեղամասը:

- անդեզիտներ, անդեզիտադափնիտներ և դափնիտներ: Դրանք Արագածի 1-ին ժայթքման արդյունք են, կազմում են լեռան զանգվածի զգալի մասը, անմիջականորեն տեղադրված են Ամբերդ գետի հունի դոլերիտային անդեզիտաբազալտների վրա: Դրանց հզորությունը 50-300 մ է:

Ստորին-միջին չորրորդական (Անտրոպոգեն)-ի ընթացքում շրջանում շարունակվել է հրաբխային ակտիվ գործունեությունը:

Ստորին չորրորդական-ը (ներկայացված քարտեզի սահմաններից դուրս) ներկայացված է անդեզիտային և անդեզիտադափնիտային կազմի հզոր լավային ծածկոցով, որոնց հզորությունը 50-150 մ է:

Միջին չորրորդականի կտրվածքի հիմքում հիմնականում հրաբխային տուֆերն ու տուֆալավաներն են, որոնք առանձին տեղերում անցնում են պեմզաների:

Հրաբխային տուֆերը համատարած ծածկոցների և առանձին անկանոն ձևի տուֆակուտակների ձևով ծածկում են ստորին չորրորդականի կամ վերին պլիոցենի անդեզիտաբազալտների, անդեզիտների և անդեզիտադափնիտների հողմահարված և մասամբ լվացված մակերեսները, լցնելով հին ռելիեֆի ցածրադիր մասերը:

Միջին չորրորդականի կտրվածքը ավարտվում է ջրասառցադաշտային, լճագետային կոպճազլաքարերի, ավազների ու կավերի ոչ մեծ հզորության նստվածքներով:

Վերին չորրորդական-ը ներկայացված է փոքր հզորության բազալտների, անդեզիտաբազալտների ծածկոցներով Աշտարակյան հոսք:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են հիմնականում ալյուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ նստվածքներով՝ կավեր, կավավազներ, կոպճաավազներ և այլն: Դրանք շրջանում ունեն ոչ մեծ հզորություն՝ 0,1-ից 2 մ³ և միայն առանձին մասերում հասնում են մինչև 10 մ-ի:

2.3. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Համաձայն ՀՀՇՆ 20.04 երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերին Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8,9 բալ և ավելի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՎՏԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզ



50 ՏԱՐՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԱՐԱԳԱՑՈՒՄՆԵՐԻ
ԳԵՐԱՉԱՆՑՄԱՆ


10% ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Մասշտաբ 1 : 500 000


2018

ՍԵՅՄՍԻԿ ԳՈՏԻՆԵՐ

Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով



Տեղամասի տարածքը ներկայացված է մինչև 5° թեքությամբ մեղմաթեք հարթավայրով: Տարածքի երկրաձևաբանական կառուցվածքը բացառում է սողանքային երևույթների ձևավորումը: Մոտակա հայտնի սողանքային մարմինը գտնվում է երևակման տարածքից մոտ 18 կմ հյուսիս՝ Արագած լեռան լանջին:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ




Սողանքներ



Խոշոր սողանքային տարածքներ

Հողմահարման գոտիներ



Ջերմաքիմիական



Ջերմակենսաքիմիական



Ջերմաստոնամանիքային



Նեոտեկտոնական բարձրացումների
հավասարագծեր (կմ)



Տեկտոնական խախտումներ


Ավազանների սահմաններ




Սևանա լճի



Օկուպացիոն հետազոտություններ





Նկար 4.

Շրջանի մակերևույթի երկրաձևաբանական և թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև նկար 4և 5ում:

ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ

«Զի Թի Էս Սթոուն»>> երևակումում հետախուզական մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նրա երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆի ձևը:

Ելնելով հետախուզման համար հատկացված տարածքի չափերից, տեղամասի հետախուզումը որոշվել է իրականացնել մեխանիկական հորատման հորատանցքերի և նմուշարկման միջոցով:

Նշված աշխատանքների հիման վրա կտրվի բազալտների արդարոյունաբերական գնահատականը, կմշակվեն կոնդիցիայի չափանիշները և B կատեգորիայի պաշարների հաշվարկ կկատարվի:

Երկրաբանահանությային աշխատանքներ

- Տոպոգրաֆիական հանույթ

Ուսումնասիրվող տարածքում բազալտների հեռանկարայնության գնահատման համար անհրաժեշտ է կատարել 1:1000 մասշտաբի երկրաբանահանությային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 5.13 հա տարածքի վրա: Դրանից բացի բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Նախատեսվում է բոլոր փորվածքների մակշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում:

Նախատեսվում է հետազոտվող տարածքի վրա ստեղծել 1-ին և 2-րդ կարգի տրանզուլյացիոն ցանց: Տոպոլմակշեյդերական աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

- Որոնողական երթուղիներ

Որոնողահետախուզական աշխատանքների համար եզրագծված տեղամասում նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի որոնողական երթուղիներ, 2կմ ընդհանուր երկարությամբ դաշտի երկրաբանական կառուցվածքի և երկրաբանական սահմանների ճշտմամբ:

Հորատանցքերի հորատում

«Զի Թի Էս Սթոուն»>> հետախուզվող տեղամասում բազալտները խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել հորատանցքեր մինչև 15մ խորությամբ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն մասնագիտացված մասնավոր կազմակերպությունների կողմից պայմանագրային հիմունքներով: Այդ աշխատանքներով պետք է ապահովվի օգտակար մարմնի համապատասխան տիրույթից նվազագույնս 90% հորատահանուկի ելք:

Հորատումն իրականացվելու է ինքնաշարժ հորատող հաստոցներով կարծր համաձուլվածքի թագիկներով: Ընդամենը նախատեսվում է հորատել 15մ միջինը խորությամբ թվով 13մ հրատանցքեր: Այսպիսով, հորատման ընդհանուր մոտավոր ծավալը կկազմի 195զծ. մ:

Հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում

Նախագծով նախատեսվում է հորատել 13 հորատանցք, որի համար 13 անգամ կկատարվի հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Փորձնական հանույթ

Պիտանի բլոկների ելքի տոկոսը որոշելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել փորձնական քարահանքի անցում 100 մ³ ծավալով, թարմ ապարների մեջ:

Փորձնական բացահանքի չափերն են՝ $20 \times 2 \times 2.5 = 100$ մ²: Փորձնական հանույթը պետք է կատարվի առանց պայթեցման աշխատանքների հորատասեպային եղանակով: Լեռնային զանգվածը 100մ³ ծավալով տեղափոխվելու է գ.Սասունիկ (1.5կմ հեռավորության վրա հանքավայրից), KAMAZ մակնիշի բեռնատար ավտոմեքենայով:

Լեռնային փորվածքների փաստագրում

Նախատեսվում է իրականացնել հետախուզական հորատանցքերի կապակցում, հորատահանուկի փաստագրվում է և նկարագրում: Կատարվելու է նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում նմուշարկման միջակայքերի նշմամբ: Տեղամասի տոպոգիմքի վրա կնշվեն հորատանցքերի տեղերը, որոնք կգրանցվեն համապատասխան մատյանում:

Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով:

Այդ աշխատանքների ծավալներն են. 195զծ.մ հորատանցքեր և 20զծ.մ փորձնական բացահանք -215զծ.մ:

Նմուշարկում

Օգտակար հանածոյի որակական ֆիզիկամեխանիկական, քիմիական և պետրոգրաֆիկական հատկությունների որոշման նպատակով բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային մենակտորային նմուշարկման:

Հորատանցքերը կենթարկվեն համատարած և կետային (ընդհատվող տիրույթներով) նմուշարկվող առավելագույնը 5մ երկարությամբ հանուկային նմուշներով:

Ապարի քիմիական և պետրոգրաֆիական հատկությունների որոշման համար կվերցվեն 2-ական հանքակտորներ:

Ընդամենը նախատեսվում է վերցնել 39 հանուկային և 2-ական քիմիական և պետրոգրաֆիական հետազոտությունների համար և 2 նմուշ ճառագայթահիգիենիկ ուսումնասիրության համար:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Նախատեսվում է 39-նմուշների ֆիզմեխ. հատկությունների ուսումնասիրություն և 2-ական նմուշների քիմիական և պետրոգրաֆիական ուսումնասիրություն և 2 նմուշ ճառագայթահիգիենիկ ուսումնասիրության համար:

Հորատման հարթակների շինարարություն

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները):

Նախատեսվում է 13 հորատման հարթակների կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Այդ աշխատանքների ծավալներն են՝

-13 հորատման հարթակ: Մեկ հորատման հրապարակի մակերեսը կկազմի

$$6մ \times 8մ = 48մ^2$$

Ընդհանուր մակերեսը կկազմի – 624 մ²

ծավալը կկազմի՝ 624 մ² x 0.2մ = 124,8 մ³

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքավայրի ապարների զանգվածների առանձնահատկությունները, դրանց անիզոտրոպիան, ապարների կազմը, դրանց ճեղքավորվածությունը, ապարների կազմվածքային յուրահատկությունները և այլն:

Ճառագայթահիգիենիկ իրավիճակի գնահատում Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՆՏՐԱԿՏԻՎԱՑԻԱ

Հողի վերին շերտի պահպանության նպատակով ծրագրով նախատեսվում է հորատահարթակների կառուցման, փորձնական բացահանքի ժամանակ հանել հողի

շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, ծածկել հողաշերտով:


Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների մակերեսից: Հողաբուսածածկի շերտը վերականգնվում է 0.2 մ խորության վրա: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը /փորձնական բացահայտի +հորատման հարթակներ/ կազմում է $624+40=664\text{մ}^2$: Վերականգնման ծավալը կկազմի $664\text{մ}^2 \times 0.2\text{մ} = 132,8\text{մ}^3$:

Վերականգնումը իրականացվելու է ձեռքով III կարգի գրունտներով: Ռեկուլտիվացիայի գումարը կկազմի՝ $132.8 \times 600 = 79680$ դրամ

2.4 Երևական տարածաշրջանի կլիման

Տեղամասի կլիման չոր ցամաքային է: Քամիների գերակշռող ուղղությունը հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններն են: Կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 6ում :



Նկար 6.

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	1090	-42	-13	44	11.3	162	208	247	250	202	136	66	-0.5	11.4	-25	41

Օդի հարաբերական խոնավությունը Աշտարակ օդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15 ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Աշտարակ	76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	62	67	40	29

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը ըստ Աշտարակ օդերևութաբանական կայանի բացակայում է:

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմության կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր
			ըստ ուղղությունների												
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					

																ը Է մեկ անգ ամ «ո» տար ի- ների ընթա ց- քում		
																2 0 0	5 0 0	10 0 0
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	1 6	1 7	18	
Աշտարակ	892,0	հունվար	4	21	22	11	16	12	10	4	0	2,0	2,5	32	3 1	3 5	38	
			1,6	2,0	2,2	2,3	2,0	1,8	2,0	2,1								
		ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	0	2,7						
			3,7	2,8	2,6	2,8	2,8	2,7	2,9	2,8								
		հուլիս	4	26	23	11	12	11	9	4	0	3,2						
			4,4	3,5	3,3	3,2	3,2	2,6	2,7	3,2								
		հոկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	0	2,2						
			1,7	2,1	2,3	2,4	2,3	2,1	2,1	2,2								

2.5. Մթնոլորտային օդ

Հանրապետության տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է Շրջակա միջավայրի նախարարության , Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի՝ ՊՈԱԿ-ի կողմից: Մթնոլորտային օդի մոնիթորինգի տեղամասի շրջանում՝ բնակավայրերում չկա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում մոտակա բնակավայրերի օդային ավազանների վրա ազդեցությունը կարող է գնահատվել հաշվարկային եղանակով՝ համաձայն 2014 թվականի , ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ համապատասխան ձեռնարկ-նախագիծ: Ըստ այդ նախագիծի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին են դասվում տեղամասին հարակից բնակավայրերը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝ փոշի՝ 0.2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.6. Ջրային ռեսուրսներ

Երևական տարածքում մշտական բնույթի մակերեսային ջրային հոսքեր՝ գետեր չկան:

Մակերևութային ջրերի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության , Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի՝ (ՇՄՄՏԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ , գերազանց (1-ին դաս) , , լավ (2-րդ դաս) , , միջակ (3-րդ դաս) , , անբավարար (4-րդ դաս) և , վատ (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձևաչափի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5% գնահատվել է 2-րդ դասի (, լավ որակի) , 40.8% -ը գնահատվել է 3-րդ դասի (, միջակ որակի) , 11.2% -ը գնահատվել է 4-րդ դասի (, անբավարար որակի) և 21.4% գնահատվել է 5-րդ դասի (, վատ որակի):

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԽԱՆՆԵՐ

Մարզկենտրոններ	Մարզեր
Բաղաբեր	Երևան
Մարզկենտրոնային բնակավայրերի որակի մոնիթորինգի դիտակետեր	Արագածոտնի մարզ
Հիդրոլոգիական դիտակետեր	Արարատի մարզ
Մետաղի մոնիթորինգի դիտակետեր	Արմավիրի մարզ
Մոտորային թաղանթային բնակավայրերի մոնիթորինգի դիտակետեր	Գեղարքունիքի մարզ
Մրցույթային օդի գետնամերձ շերտի	Լոռու մարզ
Արտիկ նույնատեսակի դիտակետեր	Նոյաբյանի մարզ
Պայիկ նույնատեսակի դիտակետեր	Շիրակի մարզ
Օդերևութաբանական կայաններ	Սյունիքի մարզ
Հիմնական գետեր	Վայոց ձորի մարզ
ՀՀ պետական սահման	Տավուշի մարզ
Լճեր և ջրամբարներ	

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը


28

նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից հետո և Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում, Զասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Մարմարիկ գետը՝ գետաբերանի հատվածում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում:


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):


ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին




ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը 2022 թվականին (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)




Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Գծապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.



Գծապատկեր 1. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.



Գծապատկեր 2. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.

Հրազդան	Քառասին	0.5 կմ ք. Ապարանից վերև (43)	Երկայթ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Ապարանից ներքև (44)	Նիտրիտ իոն, մանգան, երկաթ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԳՇՆ	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	
		1 կմ ք. Աշտարակից վերև (45)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ	3-րդ	3-րդ
		3.5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, երկաթ, ՀԱԱ	3-րդ	3-րդ

Հրազդան ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև, ինչպես նաև գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ նաև ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով և ընդհանուր անօրգանական ազոտով։ Ապարան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով։


Շաղվարդ գետի ջրի որակը Փարսի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով։

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։ Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով։


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով։

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով։


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով։



Գծապատկեր 11. Քասախ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 12. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 10. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

[illegible]

Տեղամասի շրջանում տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավագոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ: Հողերի բնական տիպերի բաշխվածությունը երևակման շրջանում բերված է նկար 7-ում:

Բուն երևակման տարածքը ներկայացված է շագանակագույն թույլ կարբոնատային փոքր, առանձին հատվածներում միջին հզորությամբ (0,25 միջին հզորությամբ) հողերով, որոնք ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Տեղամասի շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.36մ³ի, տեսակարար զանգվածը՝ 2.57մ³ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 46,4, խոնավությունը՝ 24% Հողերում որոշվել է կարբոնատների 1% պարունակություն, ինչը առաջ է բերում հողերի ցեմենտացում, ամրացում, ցածր ջրաթափանցելիություն:

Հողերի ստրուկտուրան թույլ արտահայտված կնձկային է, առանձին հատվածներում՝ փոշենման:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված ջրի քանակությունների գումարը, մ/էկվ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	O ₂	գիպս SO ₄		
Մուգ-շագանակագույն	015	3.2	.4	0.0	33.1	7.9
	1534	2.1	.3	0.0	31.5	8.4
	3473	1.6	6.5	0.1	30.1	8.3
	73105	1.0	5.7	0.1	29.7	8.3
	105155	0.8	7.7	0.1	25.8	8.4
Բաց-շագանակագույն	025	2.4	.4	0.0	29.4	8.1
	2539	1.4	.4	0.5	28.8	8.4
	3985	1.2	5.4	1.0	24.4	8.2

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48մ³ի,

տեսակարար զանգվածը՝ 2.502.65/ամ3-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.382.1, խոնավությունը՝ 2030%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 1025% որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Ամֆշակ հողերում ստրուկտուրանիտոզոր կնձկային է:

Տեղամասի տարածում հողաբուսական շերտը ներկայացված է առավելագույնը 0.2 հզորությամբ խոտաբույսերի արմատներ պարունակող շագանակագույն հողերով: Հումուսի պարունակությունը հասնում է 1.7% CO₂ 3.9% կլանված կատիոնների գումարը՝ 26.5/էկվ 100 հողում:


Հայցվող տարածքի հողերն աղտեղված չեն: Հայցվող տարածքի հողի բերրի շերտի հզորությունը կազմում է մոտ 0,2մ:

2.8. Բուսական և կենդանական աշխարհ

Տեղամասի շրջանին բնորոշ են երկու տիպի բուսակաձածկեր: Երևակման հյուսիսային հատվածում զարգացած են լեռնատափաստանային հացազգային, տարածոտա-հացազգային լանդշաֆտները, իսկ հրավում (ներառյալ՝ տեղամասը) կիսանապատային օշինդրա-էֆեմերային բուսականությունը (նկար 8):

Լեռնատափաստանային բուսականությունը ներկայացված է երեք ֆորմացիաներով՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստաններ:

Բուն երևակման տարածքին բնորոշ կիսանապատային բուսականությունը ներկայացված է օշինդրա-էֆեմերային տեսակներով՝ օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), այծակն գլանաձև (*Aegilops cylindrica*), անապատասեզ (*Eremopyrum*), վառվռուկ (*Alyssum*), փշամանդիկ (*Atraphaxis*), անմեռուկ (*Xeranthemum squarrosum*), երիզախոտ երկարամազը (*Taeniatherum crinitum*) և ավելաբույս գետնատարածը (*Kochia prostrata*):



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարգագետնային ճմատորֆային խճային	32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
2	Լեռնամարգագետնային ճմային խորքային հագեցած	33	Սևահող ալրային կարբոնատային
3	Լեռնամարգագետնային ճմային խորքային չհագեցած	34	Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային
4	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային հագեցած	35	Մարգագետնասևահողային կոպճային
5	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային չհագեցած	36	Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
6	Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային հագեցած	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային
7	Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային	38	Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
8	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային հագեցած	39	Շագանակագույն մնացորդային կարբոնատային
9	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած	40	Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
10	Մարգագետնատափաստանային տիպիկ խճաքարային	41	Բաց շագանակագույն մնացորդային կարբոնատային
11	Անտառային գորշ ուժեղ չհագեցած խճաքարային	42	Բաց շագանակագույն մնացորդային գիպսակիր
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած	43	Բաց շագանակագույն թերի զարգացած
13	Անտառային գորշ թույլ չհագեցած խճաքարային	44	Բաց շագանակագույն կոպճային
